«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ *Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում*

Առարկան՝ *«Հայոց լեզու» և «Գրականություն»*

Հետազոտող ուսուցիչ՝ *Հ. Անտոնյան*

Ուսումնական հաստատություն՝ *Արարատի մարզ ք. Արտաշատ հ.4 հիմն. դպրոց*

Երևան 2022

Բովանդակություն

1.Տիտղոսաթերթ ----------

2.Բովանդակություն----------

3.Ներածություն----------

4.Գլուխ առաջին՝ էպոսը ի՞նչ դեր և նշանակություն ունի հայրենասիրական արժեհամակարգի ձևավորման գործում----------

5.Գլուխ երկրորդ՝ Հայրենասիրության ու ազգային արժեքները ձևավորող կարևոր գաղափարները որքնո՞վ են արդիական են այսօր ----------

6.Եզրակացություն ----------

7. Գրականության ցանկ ----------

Ներածություն

Ուսուցման մեջ միշտ պետք է զանազանվի երկու կարևոր հասկացություն՝ հասկանալու աստիճանը, որը յուրաքանչյուր ուսուցիչ կատարում է, և հասկացածը աշակերտի մշտական սեփականություն դարձնելը: Կրթության համակարգում գրականությունը առանձնահատուկ տեղ և դեր ունի անձի ձևավորման, նրա մտավոր առաջնթացի, վերլուծման և պատկերավոր մտածելության զարգացման, ինչպես նաև մնացած բոլոր առարկաների ընկալման և յուրացման գործում: Հայոց լեզու և գրականություն դասավանդող ուսուցչի համար առավել կարևոր և առաջնային է ազգային ինքնապահպանության հիմնախնդիրը՝ հայրենասիրությունը, որից ծագում են մնացած ազգային հիմնասյուները: Հայրենասիրության և ազգասիրության ուսուցումն ու դաստիարակությունը դպրոցում պետք է լինի առաջնային: Հայրենասիրությունը բարոյական բաձր արժեք է, որի հիմնական բաղադրիչը սերն է: Հայրենասիրությունը՝ որպես որակ , մարդու մեջ հանդես է գալիս ու մարմնավորում դեպի իր հայրենիքը ունեցած սիրո, նրան ծառայելու ու նվիրվելու պատրաստակամության մեջ:Հայրենասիրությունը և ազգասիրությունը ոչ միայն հայրենիքի, այլ նաև հայրենիքում ապրող ժողովրդի նկատմամաբ սերն ու հարգանքն է: Այսօր ավելի քան երբևէ հայրենասիրությունը դարձել է բարձրագույն արժեք. լինել հայրենասեր և ազգասեր նշանակում է մշտապես աշխատել հայրենիքի բարգավաճման և ժողովրդի բարօրության համար, չխախտել հայրենիքում ընդունված օրենքները, հարգել հաստատված կարգ ու կանոնը, պահպանել ժողովրդի արժանապատվությունը, վերահսկել հայրենիքի անվտանգությունը և չներել նրա նկատմամբ ոտնձգություններ կատարողներին:

Ահա հայրենասիրության վեհ գաղափարի, նրա դերի և նշանակության, ինչպես նաև արժեհամակարգի ձևավորման գործում մեզ օգնության է հասնում է «Սասունցի Դավիթ» էպոսի ուսուցումը 9-րդ դասարանում: 9-րդ դասարանում անցնում ենք «Սասունցի Դավիթ» էպոսից «Սանասար և Բաղդասար. կռիվ խալիֆի դեմ» հատվածը և երրորդ ճյուղից մի քանի հատվածներ՝ «Մանուկ Դավիթը Մըսրում»,«Դավթի և Մելիքի մենամարտը»,«Դավթի մահը»: Հետազոտական աշխատանքում կներկայացնեմ հայրենասիրությունը՝ որպես բարձրագույն արժեք,ապա կանդրադառնամ կարևոր հարցերին՝ էպոսը ի՞նչ դեր և նշանակություն ունի հայրենասիրական արժեհամակարգի ձևավորման գործում և հայրենասիրության ու ազգային արժեքները ձևավորող կարևոր գաղափարները որքնո՞վ են արդիական են այսօր:

Գլուխ առաջին

«Սասունցի Դավիթ» էպոսը ի՞նչ դեր և նշանակություն ունի հայրենասիրական արժեհամակարգի ձևավորման գործում:

«Հայկական էպոսը հայ ցեղի ապրած կյանքի և հոգեկան կարողությունների հոյակապ գանձարան է ու իր մեծության անհերքելի վկայությունն աշխարհի առջև »: [1] Հ. Թումանյան «Սասունցի Դավիթ» էպոսը հայ ժողովրդի արհավիրքներով լի կյանքի պատմություն է, նրա կեցության, կենսունակության, պայքարի, հավերժության, փիլիսոփայության հավերժ կենդանի գիրքը, մատյան հերոսությանը: Ոչ մի աղբյուրից չես կարող այնպես կենդանի ու ամբողջության մեջ ճանաչել ժողովրդին, ինչպես բուն էպոսից: էպոսը, ասում է Հեգելը, մի հայելի է, որի մեջ հստակությամբ ցոլանում է տվյալ ժողովրդի հոգու պատկերը: Այն ժողովրդի հարատև գիրքն է, որպես նրա մշտանշանակ բիբլիան[2]:

Մեր էպոսում մարմնավորել են հայ ժողովրդի պատմության ամենահերոսական էջերը, նրա մաքառումներն ու վսեմ գաղափարները: Այն ոչ միայն գեղեցիկ բանահյուսական դյուցազներգ է, այլ նաև սերունդներին հայրենասիրության,մարդասիրության, աշխատանքի ու աշխատասիրության ոգով դաստիարակելու աղբյուր է:Ուրիշ ազգերի էպոսները կարող են դուրս գալ ազգայինի շրջանակներից և դառնալ ողջ մարդկության սեփականությունը, երբ կքարոզեն բարոյական վեհ գաղափարներ: «Սասունցի Դավիթ» էպոսը հենց այդպիսի ստեղծագործություն է: Մեր ժողովուրդը կերտել է այնպիսի կերպարներ, ինչպիսիք են՝ Հայկ, Արտաշես, Տիգրան, Արա Գեղեցիկ, Տորք Անգեղ և այլք, որոնք այդ վեհ գաղափարների կրողն ու տարածողն են եղել, նրանց կատարած գործերով մարդիկ ոգեշնչվել են, պայքարել, սիրել հայրենին, լինել ազնիվ, առաքինի, մեծ հայրենասեր: Եվ այդ հերոսների գործի շարունակողն ու բարձրագույն գաղափարների կրողն են եղել «Սասունցի Դավիթ» -ում ներկայացված հերոսները՝ Սանասար, Բաղդասար, Ծովինար, Մեծ Միհր, Դավիթ, Ձենով Օհան, Փոքր Միհր, Արմաղան և այլք:

էպոսը պատմողական ստեղծագործություն է: Այն տվյալ ժողովրդի պատմական զարգացման գեղարվեստական տարեգրությունն է, նրա ցանկությունների և սպասելիքների

---

1. Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ.6, Երևան, 1959, էջ 357:

2. Ձ. Խազարյան, Բարոյական սկզբունքները «Սասունցի Դավիթ» էպոսում, Երևան, 1976, էջ 8:

ուսումնասիրությունը: «Սասնա ծռեր» վիպերգը կամ էպոսը ստեղծվել է միջնադարում՝

արաբական արշավանքների շրջանում: Էպոսի մեջ, նրա գլխավոր կերպարներում ժողովուրդը խտացված ձևով առանձին կենդանի անձի կերպարանք է ստանում: Երբ մենք ասում ենք Սանասար, Բաղդասար, Մհեր, կամ Դավիթ՝ հասկանում ենք ոչ թե ինչ-որ պատմական անձեր, այս կամ այն ժամանակաշրջանը մարմնավորող կերպարներ,այլ հայ ժողովուրդ: Էպեսը ներկայացնում է ժողովրդի կյանքի հերոսական էջերը,նրա դարավոր պայքարը արտաքին ու ներքին հարստահարիչների դեմ: Հենց էպոսի բովանդակության հիմքում էլ ընկած է հերոսականությունը, ինչը հայրենասիրության վառ դրսևորումն է:

Արաբները հրով ու սրով Հայաստան են մտնում յոթերորդ դարի կեսին և իշխում են մինչև տասերորդ դարի առաջին տասնամյակը: Իր տիրապետության ավելի քան երկու և կես դարի ընթացքում արաբական խալիֆաթը վայրագորեն կեղեքում է հայ աշխատավորությանը՝ մատնելով նրան սովի, սրի ու սարսափի: Հարկային ծանրագույն լուծը և հարկահանների հալածանքներն ու բռնությունները հենց սկզբից խորը զայրույթ են առաջացնում ժողովրդի մեջ և տեղի տալիս հզոր ապստամբությունների, որոնք հիմնովին ցնցում են խալիֆաթի տիրապետությունը, կրակ վառում նրա ոտքերի տակ և ստիպում հեռանալ Հայաստանից: Եվ ահա 702 թ-ից սկսած և մինչև 10-րդ դար տևած այդ արշավները հանգեցրեց նրան, որ հայը պայքարեց և իր այդ պայքարի գեղարվեստական արտացոլումը «Սասունցի Դավիթ» էպոսն է:

Հայրենասիրության վեհ գաղափարին անդրադառնալիս չենք կարող չխոսել աշխատավոր, արարող ժողովրդի մասին: Այն Բարոյական սկզբունք է: «Սասունցի Դավիթ» դյուցազներգության հերոսները աշխատանքը դիտում են որպես մարդու գոյատևման և առաքինության բարոյական սահման: Հերոսները մարդկային գոյության հիմքում տեսնում էին արարելու, շենացնելու, կառուցելու, ունեցածը պաշտպանելու և պահելու մեջ: Ամեն մարդու ստեղծած աշխատանքի արդյունքը իրեն պատկանի ու մարդիկ ապրեն խաղաղ, ահա սա է հիմնական գաղափարը: Հենց էպոսի սկզբում՝ «Սանասար և Բաղդասար» ճյուղում տեսնում ենք աշխատանք և հայրենասիրություն զուգահեռները: Որքան մեծ զգացմունքով է ու զմայլանքով է խոսում հայրենի դաշտերում ծավալված խաղաղ աշխատանքի մասին ժողովուրդի դուստր Ծովինարը՝ «կռապաշտ» թագավորի հետ ամուսնանալուց առաջ.

…Աշխարհ արեվ կա, աշխարք արեգակ կա,
Ամեն մարդ խըտ ուր գործին.
Ոմանք խըտ ուր ջրին, ոչխարին,
Ոմանք էլ խըտ էնունց ռընջբրութենին[1] :

Հենց այն բանի համար, որ հայոց աշխարհում միշտ արև լինի ու մարդիկ խաղաղ ապրեն, չդառնան բռնակալության զոհ՝ Ծովինարը համաձայնում էամուսնանալ իրեն ու իր ժողովրդին ատելի թագավորի հետ:

Հայրենասիրության, պատվի ու պատասխանատվության մեծ զգացումով էր օշտված Գագիկ թագավորը: Խալիֆան կնության առաջարկ է անում և ասում.

- Գագիկ թագավոր,
  Խաթրով ըլնի, տի տա՛ս:
  Կռվով ըլնի, տի տա՛ս:
  Թե քո աղջիկ չտա՛ս,
  Քո ժողովուրդ առ ու գերի կանեմ,
  Ջեզ ամենից կը մորթեմ,
  Քո ազգ ամեն կը կտրեմ,
  Քո քաղաք տակ ու վերև կանեմ,
  Քո թախտ ու թագ կքանդեմ[2]:

Կռվում են և պարտվում է խաչապաշտ թագավորի զորքը: Այստեղ Ծովինարի հայրենասիրական մեծ քայլը.

… Ջամեն տի սպանի իմ պատճառով
Աղեկն էն է, ե՛ս էրթամ,
Ուրիշ մարդու թող բան չլնի
Ես մենակ մեռնիմ իմ հոր թերեն,
Ես մեկ ջան եմ, էրթամ, կորսըվիմ,
Քանց մեր Հայաստան էրկիր ավերի,
էն հազար հազար հեգիք կորուսանին…[3]

1. Սասունցի Դավիթ, Երևան, 1981, էջ 9 :
2. Նույն տեղում, էջ 5:
3. Նույն տեղում, էջ 6:

էպոսում փառաբանվում է այն հայրենասիրությունը, որով տուն ու տեղ են կառուցում, հայրենիք հզորացնում, շենացնում ու բնակեցնում Սասունը: Սանասարն ու Բաղդասարաը սկզբում աղքատ-ուղքուտների տներն են կառուցում, մեկ տարի շարունակ աշխատում՝ բերդ ու տուն են կառուցում:

էպոսում փառաբանվում է այն հայրենանվեր աշխատանքը, որ կատարվում է թշնամու ավերածը վերակառուցելիս:Երկիրը, երբ ազատվում էր օտար բռնակալից, անսահման ուրախություն էր համակում ժողովրդին: «Պետք է կառուցել», ասպես շշնջում է Դավթի ականջին ավերակների միջից հառնող լույսը:

Լսելով Ջենով Հովանի աշխատանքային կոչը, աշխատավորներ են գալիս տարբեր երկրներից, յոթ քաղքի բանվորներ, «ուսթեք» շինեցին «Մարութա Բանցրիկ Աստվածածինը», խորը հիմք գցեցին և վերջացրին յոթ օրում: Ինչպես Սասնա բերդի կառուցման ժամանակ, այնպես էլ Մարութա Բարձր Աստվածածնի կառուցման ժամանակ աշխատանքը ինքնաբուխ էր, հաճելի,զերծ հարկադրանքներից և բռնություններից: Իբրև առատության աղբյուր աշխատանքը ծառայում էր ի բարօրություն հայրենքին: Պատահական չէ, որ էպոսում ինչպիսի ուժով ով ներկայացված է աշխատանքը, առավել մեծ պաթոսով ներկայացված է արտաքին ու ներքին հարստահարիչների դեմ ժողովրդի մղած դարավոր պայքարը: էպոսի բոլոր դրական հերոսները հերոսաբար մարտնչող ժողովրդի հավաքական կերպարներն են: Սանասարի և Բաղդասարի, Մեծ Միերի, Դավթի, Ջենով Օհանի, Փոքր Միերի և այլոց կողքին հերոսաբար մարտնչող ժողովուրդն է՝ գութանավորները, նախրորդներն ու հոտաղները, շինարար վարպետներն ու սևագործ բանվորները, ջուլհակներն ու պարզապես իրենց հող ու ջրով զբաղվող մարդիկ: Բոլորի համար ընդհանուրը մեկն էր՝ կրծքով պաշտպանել սեփական հայրենիքը: Այդպես վարվեց Մեծ Միերը՝ Սանասարի կրտսեր որդին: Նա շատ քաջ էր ու համարձակ: Սասուն այդ ժամանակ հարկատու է դառնումՄըսրա Մելիքին:Չափահաս դառնալով՝ Միերը տերություն է անում իր երկրին ու ժողովրդին:Նա գոտեմարտում է հսկա առյուծի հետ և, երախը պատռելով, մեջտեղից կիսում:Այդ օրվանից նրան անվանում են Առյուծաձև Միեր:Սասնա հերոսը սպանում է նաև Սպիտակ դևին և ազատելով գեղեցկուհի Արմաղանին՝ ամուսնանում է նրա հետ:Տեսնելով, որ անկարող է հաղթել Միերին՝ Մելիքը հաշտվում է նրա հետ և հրաժարվում հարկերից:Յոթ տարի թունդ գինով արբեցած Միերը ուշքի է գալիս լսելով՝ Իսմիլ Խաթունի խրատը՝ ուղղված Մըսրա Մելիքին.

Մըսրա օջախ կանգնացուցես,
Հայու օջախ փչացուցես[1]:

1. Սասունցի Դավիթ, Երևան,1981, էջ 120:

Ահա այս խոսքերը լսելով, զգալով և զզջալով իր սխալը՝ Միերը վերադառնում է Սասուն: Այստեղ խոսում է նրա հայրենասեր ոգին, կամքը, ուժը, որով նա շենացնում է Սասունը, ունենում նաև ժառանգ՝ Դավթին:

Դավիթը իսկապես հերոս էր, նա անցնում է Մըսրա Մելիքի կողմից կազմակերպված բոլոր դավադրությունների միջով և վերադառնում հայրենի Սասուն: Նա խիզախ էր, ազգասեր, հայրենասեր ու աշխատասեր: Զբաղվում էր գառնարարածությամբ, նախրապանությամբ, որսորդությամբ: Նա սպանում է Սասունը թալանած հարամի դևերին և բարիքներով լցնում երկրի ամբարները: Նա՝ միայնակ, բարդու ծառով կոտորում է Մելիքի զորական Խոլբաշու զորքին, մի լավ ջարդ է տալիս հարկահավաք Կոզբադնիին: Հետո Մըսր Մելիքն է զորք հավաքում և արշավում Սասունի վրա: Դավիթը կռվում է Մելիքի անհամար զորքի դեմ և սրի մեկ հարվածով մեջտեղից կիսում բռնակալին:

Հոր սխրանքներից, հերոսություններից և քաջագործություններից զերծ չէր մնում Փոքր Միերը: Նա պատերազմում է Դավթի թշնամի յոթ թագավորների դեմ և հաղթում նրանց, այնուհետև լուծում է հոր վրեժը: Էպոսում հանդիպում ենք Միերի շատ ու շատ քաջագործություններին: Միերը դառնում է անմահ և անժառանգ է մնում հոր անեծքի համաձայն: Սասնա վերջին քաջազունինհողն այլևս չէր դիմանում, այդ պատճառով նա փակվում է Վանա քար կոչված ժայռի մեջ: Տարին երկու անգամ ժայռը բացվում էր, և այնտեղից Միերը հղում է իր պատգամը.

Քանի աշխարք չար է,
Հողն էլ ղալբցեր է,
Մեջ աշխարքին ես չեմ մնա:
-Որ աշխարք ավերվի, մեկ էլ շինվի,
Եբոր ցորեն էղավ քանց մասուր մի,
Ոէ գարին էղավ քանց ընկուզ մի,
Էն ժամանակ հրամանք կա, որ էլնենք էդտեղեն[1]:

«Սասունցի Դավիթ» էպոսում միաժամանակ գեղարվեստորեն և խոր ընդհանրացումներով է ներկայացված հեյրենասիրությունն իբրև խաղաղության առհավատչյա: Հայ ժողովուրդը հարգանք ու սեր է տածել հարևան ժողովուրդների նկատմամբ: Էպոսի հերոսները միշտ բարձր են պահել ժողովուրդների բարեկամությունը և դաժան դատաստան են տեսել բոլոր նրանց հետ, ովքեր ցանկացել են գետին տապալել այն: Էպոսի հերոսները երբեք հենց

1. Սասունցի Դավիթ, Երևան,1981, էջ 315:

այնպես սուր չեն բարձրացրել այլազգիների դեմ: Նրանց սրերը երբեք չեն խաչաձևվել, որովհետև նրանց համար անսահման խորը և օտար է ազգային խտրականությունն ու ազգային ատելությունը, ուրիշին սպանելը,ուրիշի ունեցածին տեր կանգնելը և այլն: Հայը ունի երազանք, որը ի կատար է ածվում միմյանց նկատմամբ խոր հարգանքի և հավատի միջոցով:

Հայ ժողովուրդը հասակ է առել իր հող ու ջրի, իր գոյության և ինքնության համար օտար հարստահարիչների դեմ մղած ազատագրական հերոսամարտերում: Իսկ եթե սրանց ավելացնենք նաև Հայաստանի չնաշխարհիկ բնություն,երկնասյուզ լեռները, անդնդախոր ձորերը, ապա միանգամայն պարզ է դառնում պատմական այն պայմաններնվու հանգամանքները, աշխարհագրական այն ուրույն միջավայրը, որոնք իրենց խոր կնիքն են դրել նրա զարգացմանը, ազգային բնավորությանը, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ հայրենասիրություն:

էպոսի արդիականությունը: «Սասունցի Դավիթ» էպոսը, նրա հերոսները, նրանց կերպարները, բնավորության գծերը, միջավայրը, ժողովրդի ապրելակերպը, պայքարը, տուն ու տեղից զրկվելը, հանդուրժելը, մշտապես կեղեքվելն ու հալածվել է այսօր էլ արդիական են: Սկսենք Քառօրյա պատերազմից, գանք հասնենք մինչև 2022 թ.-ի սեպտեմբերի 13-ը: Ինչպես էպոսում, այնպես էլ այսօր մենք ունենք նույն իրողությունը: Կարծես թե ոչինչ չի փոխվել, փոխվել են միայն մարդիկ, փոխվել են թշնամիները, բայց սրան զուգահեռ նույնն է մնացել հայի ոգին, նրա հայրենասիրությունը, պայքարելու մեծ ուժը, հավատը, քաջությունն ու համարձակությունը: Այսօր էլ ունենք Դավիթներ, Միհրներ,Սանասարներ, Ջենով Օհաններ, Բաղդասարներ, Արմաղաններ, Ծովինարներ, Դեղձուն Ծամեր, Գոհարներ:Ինչպես էպոսում, այնպես էլ այսօր ավելի քան արդիական են մեր հերոսների խիզախուսությունները, սխրանքները, համարձակությունները, որոնք վիպասան ժողովուրդը հիրավի կոչել և կոչում է «ծուռ» այսինքն՝ սովորականից շեղվող, արտասովոր, խենթ քաջազուն: Այս հատկանիշներով էին օժտված էպոսի հերոսները, նույն հատկանիչներն ունեն մեր այսօրվա 18-20 տարեկան համարձակ, խիզախ, պատվով ու արժանապատվությամբ լեցուն զինվորները: Վիպերգի հերոսները աչքի են ընկնում թե՛ արտաքին գեղեցկությամբ, թե՛ դյուցազնական ուժով: Հապա նայե՛նք, նայե՛նք ու չզլանանք հիանալ մերօրյա թե՛ զոհված, թե՛ ողջ հերոսներով, նրանք մեկը մյուսից սիրուն են, խելացի, արի, մեծ կամքով լի ու հայրենասեր: էպոսում հերոսների ուժն ու քաջությունը երևում է նրանց գործողությունների ու սխրանքների մեջ: Նրանք կարող էին սարեր, ժայռեր փորել, դևին հաղթել, առյուծին պատռել, մի ամբողջ զորք կոտորել: Այդպիսին են հիմա մերօրյա

քաջազունները: Նրանք պատրաստ են իրենց կյանքի գնով կյանք տալ մեզ: Թե՛ վիպերգի, թե՛ մերօրյա հերոսների այդ առասպելական ուժն ու զուրությունը մայր բնությունից է, հայրենի հողից ու ջրից: Եթե առասպելական հերոսները իրենց Քուռկիկ Ձալալիով, Թուր Կեծակիով էին հաղթում, մերօրյա հերոսները մեկ փամփուշտով են կարողացել խոցել անօդաչու: էպոսի գլխավոր հերոսները նաև պարզամիտ էին, ազնիվ, բարի, միամիտ, համառ, պատվասեր, մարդասեր ու ազատասեր: Այս բոլոր հատկանիշները բնորոշ են մերօրյա բոլոր հերոսներին: Ժողովրդի ազատության ու բարօրության համար է, որ Սասնա քաջերը սուր են վերցնում և անձնազուհաբար կռվում ավազակների հարկահանների ու թշնամու զորեղ բանակների դեմ: Այսօր էլ մեր հերոսները պայքարեցին և մինչև հիմա էլ պայքարում են մի բուռ դարձած հայրենքի համար, քանզի գիտակցում են, որ այս հայրենիքը լոկ հողակտոր չէ, այլ մեր քաջերի թափված արյունն է, որը սուրբ է, սրբատեղի:Այստեղ տեղին է գրել մեծն Գևորգ էմինի հետևյալ տողերը.

Ձգո՛ւյշ խոսիր Հայաստանում,
…Ձգո՛ւյշ քայլիր Հայաստանում:
…Ձգո՛ւյշ գործիր Հայաստանում, -
Մենք գահ ու թագ չե'նք ունեցել,
Եվ... արքա' է ամեն մի հայ,
Զորք ու բանակ չենք ունեցել,
Եվ... սպա է ամեն մի հայ.
Ամեն մի հայ՝ լեռան մի ծերպ,
Ամեն մի հայ՝ ուրույն մի կերպ,
Ամեն մի հայ՝ մի Հայաստան
Բաժան-բաժան,
Անմիաբան,
Ձատվա՛ծ, հատվա՛ծ,
Եվ սակայն՝ մի՝
Երբ սպառնում է թշնամին
Մեր դարավոր անմահ երթին
Եվ այս ժայռին թառած բերդին,
Որ Հայրենիք ենք անվանում...[1]

Սասնա հերոսները վեհանձն էին, շիտակ, իրենց խոսքին հավատարիմ: Այսօրվա հերոսներն էլ առաջնորդվել և առաջնորդվում են «կյանքդ՝ կյանքիս գնով», «ոչ մի թիզ հող ոսոխին» կարգախոսներով: Սասնա քաջերը անձնազոհ էին, նրանք պատրաստ էին մեռնել իրենց հողի, ծնողի և ժողովրդի համար: Մեծ Միհրը և Արմաղանը Սասնա ճրագը վառ պահելու համար ծնում են Դավթին՝ իմանալով, որ ծնվելուն պես իրենք պիտի մեռնեն: Մերօրյա

1. https://m.mamul.am_post

քաջազուններն էլ գիտակցելով, որ էլ չեն լինի, զոհել են իրենց՝ հանուն ընկերոջ, հանուն զինակցի,հանուն ծնողի, հանուն հայրենիքի: Սասնա հերոսները որքան էլ ատում էին բռնությունն ու ստրկությունը, որքան էլ ցասումով կռվում էին թշնամու դեմ, բայց ամենևին դաժան չէին: Նրանք օժտված էիրն զգայուն սրտով, կամեցողությամբ, մարդասիրությամբ: Նույնը կարող ենք ասել հիմա. մեր տղաները երբեք չեն անի այն վայրագությունները, ինչը որ անում է թշնամին: Նրանք դա չեն աներն ոնի, քանզի նրանց հայ մայր է ծնել, նրանց երակներում հայի արյուն է հոսում, նրանք ծնվել, մեծացել և դաստիարակվել են հայեցի, իսկ հայ լինել կնշանակի պատիվ ունենալ, ազնիվ լինել, չէ՞ որ մենք աստվածաշնչյան ազգ ենք: Մերօրյա հերոսները հենց Դավթի հավաքական կերպարի կրողներն են: Փա՛ռք ու պատի՛վ այն հային, ում շնորհիվ մենք կա՛նք, կլինե՛նք ու կշատանա՛նք:

Հիշենք զօղորմին Ծովինարին,
Քառսուն օղորմի Սանասարին։
Հիշենք զօղորմին Բաղդասարին,
Քառսուն օղորմի Դեղձուն Ծամին։
Հիշենք զօղորմին Քեռի Թորոսին,
Քառսուն օղորմի Ձենով Հովանին։
Հիշենք զօղորմին Ջոջ Մհերին,
Քառսուն օղորմի Արմաղանին։
Հազար օղորմի էն Թառլան Դավթին,
Քառսուն օղորմի Խանդութ խանումին։
Հիշենք զօղորմին Պստիկ Մհերին,
Քառսուն օղորմի Գոհար խանումին։
Հիշենք զօղորմին, քառսուն օղորմի,
Մեր փիր վարպետին, որ մեզի պատմեց։
Հիշենք զօղորմին, հազար օղորմի
Ականջ արողի հոր ու մոր հոգուն[1]։

Հիշենք պատվով և փառքով մեր անմեղ նահատակներին:

1. Սասունցի Դավիթ, Երևան, 1981, էջ 316:

էպոսի արժեհամակարգը

էպոսի արժեքային համակարգի ամենակարևոր գծերից մեկը մարդասիրությունն է, որի համար էլ մեր էպոսը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ճանաչվեց լավագույն հումանիստական էպոս: ՅՈՒՆԵՍԿՕ-ի հատուկ խորհուրդը 1964 թվականին որոշել էր ընտրել աշխարհի լավագույն էպոսներն ու մի քանիսը հրատարակել տարբեր լեզուներով : 130 խստապահանջ բանհավաքներից կազմված հանձնաժողովը նախապատվությունը տվեց <<Սասունցի Դավթին>> որովհոտև. <<հոն կա մարդասիրություն, մարդակերություն չկա>>: Օտար նվաճողների դեմ սասունցիների մղած պայքարը էպոսում երբեք չի վերածվում քրիստոնեաների և այլակրոնների պայքարի: Ժողովրդական զանգվածները երբեք թշնամանքով չէին ընկալում օտարի կրոնը:

Հայկակն էպոսում, եթե նույնիսկ մեջտեղ է գալիս ազգային տարբերությունների հարցը, ապա այն լուծվում է ժողովրդական բարոյակոնության ոգով, թև, կոչված լինելով լայնորեն ու համոզիչ կերպով պատկերելու թշնամու նկատմամբ տարած հաղթանակը հերոսական էպոսն իր կոչումով սուբյեկտիվ է:

Մսրա փահլևաններից մեկը նույնիսկ վտամգի պահին մարմնով ծածկում է մանկանը: Հայ բանասացները բարի խոսք չեն խնայել մարդասեր արաբների հասցեին: Հերոսական էպոսը լի է ատելությամբ հայոց հողի թշնամիների նկատմամբ, բայց ոչ արաբների նկատմամբ՝ որպես այդպիսին, որպես ժողովուրդ, ազգ: Հայոց էպոսը ինտերնացիոնալ է և հենց դրա համար է , որ արաբ նվաճողների ու իրենց տունը հողը պաշտպանող հայերի միջև կռիվը էպոսն ի վերջո հանգեցնում է Դավթի ու Մելիքի մենամարտին: Ժողովուրդները չեն ուզում կռվել: Ժողովուրդները իրենց կառավարիչների մեղքով նույնիսկ թշնամություն են անում, ապա երազում են ազատ ու ստեղծագործ կյանքի, աշխարհաշեն աշխատանքի մասին:

Իսկ ֆրանսիացի հայագետ Ֆրեդերիկ ՖԵյդիի գնահատականը հետևյալն է. <<Գլուխս կխոնարհեմ ձյունազարդ Մասիսի առջև՝ ի դեմս նորա՝ հայ հանճարեղ ժողովրդի առջև, որի երբևէ ստեղծած փայլատակումներից է «Սասունցի Դավիթ» հավերժազրույցը՝ համաշխարհային ժողովրդական էպոսը :

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Կրթությունն այն է, ինչ մնում է դպրոցում սովորածը մոռանալուց հետո »: Ալբերտ էյնշտեյնի այս միտքն էլ ուզում եմ ելակետ ընդունել իմ եզրակացությունը գրելու համար: Արժեհամակարգի հիմքում ձևավորված մարդն է քաղաքացին: Ուսուցման, կրթության արդյունքում կարևորագույնը մարդու մեջ ձևավորված արժեհամակարգն է: Մեր էպոսը այդ առումով լավագույնս է կատարում այդ դերը, եթե այն ճիշտ ու հանգամանորեն է ուսուցանվում: Մեր էպոսը ճչում է կյանքի մասին ու փառաբանում հորդաբուխ, ազատ, հավերժական այդ կյանքը: Մեր էպոսի հերոսականությունը այն բանի մեջ է, որ պաշտպանես սեփական օջախդ : Հերոսականի այսպիսի ընդունումը մարդասիրություն է ենթադրում:Պարտություններ շատ ենք կրել, շատ ենք տրորվել, վիրավորել են մեր ազգային արժանապատվությունը: Եվ այսպես կլինի այնքան ժամանակ, քանի դեռ Հայաստանը չի դարձել ուժեղ, զարգացած և ժամանակակից երկիր: Այդ հույսն ու հավատը իր մեջ պահում է մատաղ սերունդը: Մեր պատմահոր դասերով արժեհամակարգ ձևավորած ու կրթված սերունդը, մեր արարչագիր էպոսի արժեհամակարգով կրթված ու դաստիարակված սերունդը, ով չի ենթարկվի ամեն տեսակի ազգակործան գայթակղությունների, ով, հակառակ ժամանակի հողմերի ու փոթորիկների, շարունակում է արմատները մխրճած պահել այս դժվար, բայց արարչական հողի մեջ:

Գրականության ցանկ

1. Սասունցի Դավիթ, Երևան, 1981, էջ 343:

2. Գ. Գրիգորյան, Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1980, էջ 470:

3. Ա. Սահակյան, «Սասնա Ծռերի» պատումների քննական համեմատություն, Երևան, 1975, էջ 188:

4. Ձ. Խազարյան, Բարոյական սկզբունքները «Սասունցի Դավիթ» էպոսում, Երևան, 1976, էջ 175: